

ՈՎ Հ Ա Ի Ա Տ Ա Ց ¹⁾

«Արարատ» ամսագիրը մարտի համարում տալիս է ընթերցող հասարակութեան մի գիւղական քահանայի քարոզչի որի բովանդակութիւնն արժանի է ամեն մի հաշի խորին ուշադրութեան իր շոշափած խնդրի պատճառով — այդ՝ ժողովրդին ուսեալ և արժանաւոր քահանաներ տալու ժամանակակից կենսական խնդիրն է:

Բար. Արշէն երէցը ընդունելով քահանայի քարոզչական պարտքը և իրաւունքը և խոստովանելով՝ թէ քարոզիլու համար էլ քահանան պէտք է ուսեալ լինի, աչն ինչ այդ սուրբ պաշտօնը գրաւել և գրաւում են մեր և կեղեցիներում ագէտները և անուսները՝ ըստ երևույթին կամենում է հոգևոր վարչութիւնը մի կերպ արդարացրած լինել ազգի առաջ պղպիսի ձեռնադրութիւններ թույլ տալուն համար: Ասացինք ըստ երևույթին, ըստ որում արժ. երէցը որոշ կերպով չէ բացատրում իր միտքը, պարզ չէ ասում աչն, ինչ որ ընթերցողն ինքը եզրակացնում է:

«Ժողովուրդ, գոչում է տէր Արշէնը. այս դատաստանը ձեզ կը թողում. չանցանքն ի՞նչ է, երբ գիւղաղան քահանաներ տգէտ և անխմատ են. չանցանք եպիսկոպոսին է, որ կը ձեռնադրէ, թէ էջմիածնաչ բարձր Հոգևոր Ատենինն է, որ կը թողաւորէ: Չէ ժողորդին է, որ կը թախանձէ, կը պահանջէ, համախօսական ժողովներ կը կազմէ, հարիւրաւոր ստորագրութիւններ թափում են խնդրագրին վրայ, վաւերական կնքով էլ դրոշմելով»:

Նախ քան այացուցանելը թէ որչափ սխալ է ժողովրդին մասնակից համարել տգէտներին ձեռնադրութեան մեղքին՝ կարևոր ենք համարում մի համառօտ հաշեացք ձգել անցեալի վրայ:

Սովորաբար՝ երբ հասարակական բնաւորութիւն կրող մի խնդիր է չարուցում, չաջողութիւնը կախած է լինում համակրութեան աչն չափից, որով ինքը հասարակութիւնն է վերաբերում դէպի նա: Որքան էլ օգտակար և ողմիտ լինի մի պահանջ, որքան էլ իրանց կրթութեամբ, խելքով և զգացմունքով բարձր կանգնած լինեն նրա չարուցանողները, սպտու ամենաչնիւ նրանց աղաղակը կը մնայ ձայն բարբառու չանապատի, եթէ ինքը ժողովուրդը՝ դեռ չէ զգում պահանջածի կարևորութիւնը:

¹⁾ «Մշակ» 1894 թ. № 41:

Արժանաւոր, բանիրուն քահանաներ ունենալու պահանջը չարուց-
ւել է Ռուսահայոց մէջ, եթէ շատ հեռու չերթանք, գոնէ դարուս երկրորդ
կիսի սկզբում, 60—61 թւականին Մ. Նալբանդեանցին էր գրում Տ. Մատ-
թէոս կաթողիկոսին. «Առ մեզ ամենայն կայսրութիւն անպիտան՝ պիտանի
համարի առ հոգեորակնութիւն»։ Ճիշտ նորն ժամանակին էր, որ ազգիս
ներկայ Վեհափառ Հայրապետը շրջած լինելով իբրև վարդապետ Կովկասի
հայոց մէջ և հանդիպած Մ. եպիսկոպոսի Տաթևի վանքում ձեռնադրած
քահանաներին՝ իր «Արծիւ Վասպուրականի» թերթում լուս ընծայեց մի
չօղած իբրև բողոք անարժանների ձեռնադրութեան դէմ։ Ազգէս և ու-
րիշ մի քանիսները, Սակաչն անհատների ձայները, բողոքները ցանկալի
արդիւնքը չէին տալիս, ըստ որում ժողովուրդն անտարբեր էր։

Անցնում է 15—20 տարի։ Մի կողմից մամուլը, միւս կողմից մտա-
ւոր զարգացման և չառաջադիմութեան հալ հասարակութեան զանազան
դասակարգերի մէջ արագ ծաւալ առնելը՝ մասնաւորների բողոքն ու պա-
հանջը դարձնում են ժողովրդական։ Այս բանին նպաստում են մանաւանդ
70—80 թւականների թէ վիճակներում և թէ ս. Լյմբիանում կատարած
ձեռնադրութիւնները, ժողովուրդը տեսնում է, թէ որպիսի ալլանդակ չա-
փեր է առնում ազէտ և անբարոյական անձինքների ձեռնադրութիւնը, և
նրա զաւրյութն այնքան բուռն և խիստ է լինում, որքան մեծ է լինում և
դալթակղելի մի կողմից անուս, անարժան հովիւների գունդագունդ երե-
ւիլն եկեղեցիներում ¹⁾ և միւս կողմից՝ ազգպիսի ձեռնադրութիւններին
տեղի տուող քստմնելի շարժառիթը—սիմոնիականութիւնը ²⁾։ Հոգեւոր իշ-
խանութիւնը նկատում էր և մամուլի մէջ շարունակ կարգում ազգի ազդ
զաւրյութի և անբաւականութեան արտապայտութիւնները, Տ. Գեորգ Գ.

¹⁾ 1889 թ. սինդիկն ուղղած իմ մի ընդարձակ չափաբարութեան
մէջ խօսելով ազդ ժամանակում կատարւած քահանայական ձեռնադրու-
թիւնների մասին՝ մի ծանօթութեան մէջ ասել եմ. «Ոչ իշխեմ և ոչ ցան-
կամ իրաւունս ապագայ պատմաբանի միջամտել վասն ցուցանելու առէն,
թէ որչափ բազմացան տրտունջը և անբաւականութիւնք չազգի վասն
ձեռնադրութեանց անպատրաստ անկիրթ քահանայից անհամար բազմու-
թեամբ ի 1868—1882 ամսն. և որչափ գործ բարոյական և մտաւոր չա-
ռաջադիմութեան ժողովրդեան զետադարձ կալաւ ընթացս ի վնաս և ի հար-
ւած եկեղեցու շրջանայ ազգպիսեաց քահանայից, զոր բուժել և ոչ հարիւր
ամբ զօրեցին»։ Այս չափաբարութիւնն ալ կարևոր լաւելածների հետ
մտօրիկ ժամանակում կը հրատարակենք առանձին գրքով։

²⁾ Այս օրերս Վաղարշապատում չափունեց 1882 թւին գրած պալմա-
նաձև մի մուրհակ, որ գրւած և ստորագրւած է հանգուցեալ Ստեփան Գէմիր-
ճեանցի ձեռքով։ Բովանդակութիւնն է. «Տալիս եմ այս ձեռագիրը Վա-
ղարշապատաբնակ Ա. . . ին առ. այն, որ ստացալ նորանից. . . տիրացունքի
ձեռնադրութեան համար հինգ հազար բուրլի. եթէ նորանք չձեռնադր-
ւեն, պարտաւոր եմ վիշեալ գումարը վերադարձնել»։

կաթողիկոսի վերջին տարիներում տիրացուներն ալ ևս Նրեանում կա՛մ վաղարշապատում չէին ձեռնադրում, ալ Սեանի, Գեղարդի և ալ վանքերում, ուր ժողովուրդ չէր կարող ներկայ լինել և տեսնել թէ եկեղեցու սքանչելի խորհուրդը որպիսի մարդկանց վրայ է կատարում:

Որչափ էլ եկեղեցու ներկայացուցիչները չօժարակամ չկամենալին ու շարութեան առնել ժողովրդի պահանջը, որքան էլ խուս տալին նրա ձախը լսելուց՝ այսու ամենապիւ թուրովին արհամարել անցնել չէին կարող. և ալդ ճնշման հետեանքն ալն է լինում, որ ժամանակ առ ժամանակ ժողովուրդ գոհացնելու, կամ աւելի ճիշդ կը լինի ասել՝ նսն ընթացքը արտաքնաչարդար ձեակերպութեամբ շարունակելու փորձեր են լինում:

Հանդուցեալ Գէորդ կաթողիկոսը, որ 1868 թւին սինոդին տաճ կոնդակով ցաւ ի սիրտ ծանուցանում էր թէ «Յակն արկիալ զբարոյական հանգամանս հոգևորական դասուց, չորոց առաւել և արիւն բարոյական կենդանութիւն ազգին մերոյ և զարգացումն նորա ի կրօնական Ատուածապատեթիւն... տեսաք ածնալ չալն բարձր և երկնաւոր սուրբ կոչումն (քահանաութեան) զտգէտս, զանարժանս և զարատաւորս իսկ... և ի սեղիս սեղիս նշմարեցաք զթիւ նոցին անցեալ զանցեալ քան զչալին» երեք տարուց վետոյ 1872 թւին չունւարի 27-ին տաճ մի կողակով ոչ թէ ալդ անցեալ զանցեալ թիւը կարճելու պատէր է տալիս, մինչև որ իր հիւնած նեմարանը և չորս թեմական դպրոցներն ազգին սան ուսնալ եկղեցականներ, ալ գտնելով՝ որ «Առաջնորդք վիճակաց... մանաւանդ Նրեանալ վիճակի, լակամալից ստիպեալ ի կարևորութենէ քահանալի, առաջի առնեն զձեռնադրելի անձինս ի Սինոդդ առ ի ընուլ զճողոր պէտս ժողովրդեան, բալց տեսանելով մեր, զի փոխանակ ի չառաջադիմութիւն անդր փութացուցանելոլ զժողովուրդն բարոյական կրթութեամբ, որ ըստ օրէ տգիտութեան տան պատճառս, զանուսումն և զտխմարս ձեռնադրելով ի քահանալ», պատելիում է, զիտէք ինչ տիրացուներին ուղարկել վանքերը, ու սովորեն քահանալական գիտելիք, չնալած՝ որ ինքը կոնդակ տուող շատ լաւ գիտէր, թէ մեր վանքերը բարոյական սրպիսի անկման են հասել և նրանցում նստող վանահայրերի համար ուսումն և գիտութիւնը վաղուց դարձել են չալուութեան առարկաներ: Բալց և ալնպէս տիրացուները գալիս էին «վանական դպրոցների վկայականներ» ձեռքերնին և ձեռնադրում էին: Մի նմուշ տալու համար ալ վանական վկայականներից, վերցնենք մի օրինակ: Անցնալ տարի Նրեանի կոնսիտորիան միջնորդում է ձեռնադրել քահանալ Ֆարուս գիւղի մի տիրացուին, որին սինոդն ինքն հարցաքննելով և սղէտ գտնելով՝ մերժում է: Թեմ իշխանութիւնը տիրացուին ուղարկում է Սեանալ վանքը կրթելու և ուսանելու. և ահա ալ օրերս մտնում է սինոդ վանքի վանահօր մի վկայականը, որի մէջ առաջ է թէ՛ իշխալ տիրացուն, քառասուն օր մնալով վան-

քում՝ ուսել է քահանայապատշաճ բոլոր գիտելիքը. և այդ վկայութեան հիման վրայ էլ կոնսիստորիան կրկրնում է իր միջնորդութիւնը ձեռնադրութեան համար: Յալտնի է նմանապէս և այն տխուր հռչակը, որ ստացաւ մի քանի տարի առաջ Երևանում իբր բացաճ ընծայարանը, որտեղ գիւղական տղէտ և սոպոռ տիրացուներ մի քանի ամիս քարչ գալով արձակում էին իրանց տները փիլոնն ուսներին, իբրև պատրաստածներ «ի քահանայապատշաճ գիտելիս»:

Այդ էլ ժողովուրդ հանգստացնելու միջոց էր: Այդպիսի միջոցներ են հղել և այն բացատրութիւնները, որ երբեմն-երբեմն լուել են եկեղեցու բեմից: 1878 թ. մի հպիսկոպոս ձեռնադրելով հինգ քահանաներ, դարձաւ դէպի ժողովուրդը հեռեհալ խօսքերով. «Միբելի ժողովուրդ. դուք հիմա կը մտածէք, թէ Բնչպէս կարելի էր այս տղէտ գիւղացիներին քահանայ ձեռնադրել: Գիտէք, որ Առաքեալներն էլ տղէտ, անուսում մարդիկ էին. բայց երբ հոգւոն սրբոյ շնորհքն իջաւ նրանց վրա՝ նրանք դարձան Աւետարանի քարոզիչներ և աշխարհի իմաստուններին չաղթող գիտուններ: Արովհետև սրանք էլ այսօր ձեռնադրութեան միջնորդութեամբ ստացան նոյն շնորհքը, ապա ուրեմն և կը լինին եկեղեցու արժանաւոր հովիւներ»: Իսկ երեք-չորս տարի առաջ մի ուրիշ ձեռնադրող, ներկաչացնելով ժողովրդին եօթը ձեռնադրածներինց ամեն մէկի մտաւոր և բարոյական թերութիւնները՝ ասել էր. «Նս անպարտ եմ այսպիսիներին ձեռնադրելու համար. ժողովուրդն ընտրել է, հոգևոր ծալրագոյն իշխանութիւնը հրամայել է ձեռնադրել. ես այդ հրամանը կատարեցի այսօր»:

Ժողովուրդը գիտում էր այդ բոլորը և խօրը խոցում, նրա համար ակնյալանի էր այդպիսի դրութեան տալիք դառը հետեանքն իր պաշտելի մայր եկեղեցու համար: Եւ նա 1885 թւին իր զգացած խիստ անբաւականութիւնն արտայայտելով ս. Էջմիածնի մէջ պատգամաւորները բերանով՝ կամեցաւ եկեղեցու վարչութեան ղեկը չանձնել այն անձին, որ դեռ շատ վաղ իր թերթում պախարակել էր անարժանների ձեռնադրութիւնը և իր Գրախտի ընտանիքում՝ չորրորդ և պատէր էր կարդացել հալ ժողովրդին ընտրել ուսեալ, բանիբուն և բարեբարոյ քահանայացուներ: Այդ նրան չաջողեց:

Թէ դրանից չհտոյ ձեռնադրութիւնների դործն ինչ չափ ու ձև առաւ, արդէն պարզել է 1892 թւի փետրարի «Արարատը». Այդ չուսահատական դրութեան վերջ տւեց ս. Էջմիածնի սինոդը իր շաջարեականով, որ ուղղւեց թեմական իշխանութիւններին 1892 թւի չունիսի 26-ին:

Նոյն թւի մալիսի 5-ին կատարելու էր նոր կաթողիկոսական ընտրութիւն: Այս անգամ ազգն ասելի բուն կերպով արտայայտեց իր կամքը և ընտրեց այն մարդուն, որից ակնկալում էր իր եկեղեցասէր փափազների իրագործումն: Եւ անհա այսօր, երբ հայրապետական դահի վրայ բազմել է

«Արծիւ Վասպուրականի» խմբագիրը և «Կրախտի ընտանիքի» հեղինակը, այսօր, երբ հասած պէտք է համարենք այն բաղձալի ժամը, երբ պէտք է իրագործւած տեսնենք ազգի կողմից չարուցւած հասունացրած և Վեհափառի սրտին մօտիկ կենսական մեծ խնդիրն առանց որ և է դժւարութեան, չանկարծ «Արարատի» էջերում երևում է Տ. Արշէն երէցի քարոզը, որ կարծես թէ նպատակ ունի ասելու, թէ ինչպէս կարելի է տգէտներին մերժել, եկեղեցուց հեռացնել, քանի որ ընտրողը ժողովուրդն է: Խոնչ անի հոգևոր իշխանութիւնը, երբ ժողովուրդը «կը թախանձէ, կը պահանջէ, համախօսական ժողովներ կը կազմէ, հարիւրաւոր ստորագրութիւններ թափում են խնդրագրին վրա, վաւերական կնքով էլ դրոշմելով», — ճիշդ աչն մտքով, ինչ որ չպահանջ մի եպիսկոպոս իր քարոզի մէջ, որպէս տեսանք փոքր ինչ վերջ:

Սակայն աղ խօսքերը, մի եպիսկոպոսի բերանից են լսել թէ մի երէցի, բարեբաղդաբար շատ թույլ, շատ անզօր են արդարացնելու հոգևոր վարչութիւնը, եթէ վերջինս իրան նեղն ընկած կը համարի թախանձանք-ների հանդէպ, և կոչւած լինելով եկեղեցու իսկական շահերը պաշտպանելու՝ կը զիջանի նրանց հակառակ գնալ:

Մենք շատ լաւ ենք ճանաչում հալ ժողովրդին, քաղաքացուց սկսած մինչ զիւղացին. գիտենք նրա թէ գովելի և թէ պախարակելի կողմերը, և երբէք մեր իրիշճը չի ների մեզ նրան մեղադրելով արդարացնել մեր թոււութիւնը և սարսաղանցութիւնը: Հաչ գիւղացի ժողովրդին ներկայումս դուք աչնքան էլ տղէտ մի կարծէք, որ նա անընդունակ լինի ըմբռնելու ձեր անկեղծ խօսքի նշանակութիւնը: Փորձեցէք մի կողմից իշխանական իրաւունքի և կամքի վազելուց սահմանի մէջ մնալ և միւս կողմից հասկացնել, բացատրել նրան, թէ աչ կամ աչն ինչդրում նա սխալուում է, կամ ինչ որ թախանձում, պահանջում է, վիստակար է իրան—և նա պատրաստ է հլու հպատակութեամբ լսել իր եկեղեցականին: Նոչնէ է նա և ալթանաւոր քահանայ ունենալու խնդրում: Ճիշդ է, մէջտեղում կը մնան մի քանի թախանձողներ. բաց դրանք գիւղական ժողովրդի չամառութեան ներկայացուցիչներ չեն, աչ առաջարկւած տիրացուի հաչր ու եղբայր, քաւոր սանահաչր, աներ ու ինամի, կամ մահուդ չոխաչ ստացող լեզանի զիւղացի, որ վարձել եկել է և սմենաչն օր գինետանը տիրացուի հաչրով ուտում և խմում է միաչն փատաբանելու համար: Եւ հաւատացած կացէք, որ աչք մարդիկն են, որոնք գիւղական համախօսական թերթեր են կազմում «հարիւրաւոր ստորագրութիւններ թափում են, կնքով էլ դրոշմելով». բաց մի կարծէք, կամ կարծել տաք, թէ զանազան ճանապարհներով ձեռք բերւած աչք թերթերն իսկապէս բուն ժողովրդի կամքի և ցանկութեան արտաչաչութիւններն են, աչ ճնչում գործող մի քանի հարտահարիչներ ի կամ շահախնդիրներ ի պատրաստածներ,

ու թէ համազումար ժողովներում, այլ տնէ տուն մանածելով, և շատ անգամ էլ անգրագէտ գիւղացու անունը առանց նրա խնդրելու և գիտութեան դրած: Ահա տալիս ենք ձեզ այդպիսի հազարաւոր թերթերից մէկի օրինակը: 1889 թւին Նոր-Բալագէտի Զաղալու գիւղի ժողովրդի անունով մատուցում է Երևանի կոնսիստորիալին բազմաստորագիր մի խնդիր, իրանց համար երկրորդ քահանայ ձեռնադրելու մի տիրացուի խնդիրքի մէջն էլ, ի հարկէ, վկայած է քահանայացուի «բարեբարոյութեան» մասին, այնպէս, ինչպէս Արշէն երէցը լսել է մի քանի գիւղացիների վկայութիւնն իրանց բերած տիրացուի լաւ վարք ու բարքի մասին ¹⁾: Տիրացուն ձեռնադրում է: Հաղիւ երեք տարի անցած՝ նախկին քահանայացուի բարեբարոյութիւնը վկայող ժողովուրդը բողոքում է սինոդին քահանայացածի անբարոյականութեան դէմ, լանցանքների թուում դնելով և այնպիսիները, որոնց մէջ քահանան ճանաչած է եղել շատ վաղուց: Բողոքն իշխանութեանը մատուցանելու համար ժողովուրդը համախօսական վճռով ընտրում է երկու հաւատարմատար, Համախօսական է, չէ. հասարակութեան միաձայն վճռի անունով են խօսելու այդ մարդիկ չէ. թուրք տանուտէրն էլ թուրքերէն ստորագրել և «լաւերական կնքովն էլ գրոշմել է» չէ. բաց տեսէք բանն ինչու՞ն է: Բոլոր գիւղացիների անունները, «վասն վերոգրեալների անգրագիտութեան», ստորագրել են երեք մարդիկ. բաց մէկը՝ 25 անգրագէտների անունների կէսը ուրիշ ձեռքի գրչով է գրած. լիտոյ, մի քանի գիւղացիների անունազգանունները գրած են երկու տեղ, առանձին առանձին երեսների վրայ. մի ուրիշը չորս տեղ և այլն:

Ահա ձեզ «հարիւրաւոր թափած ստորագրութիւններ»:

Սոցն տարւալ «Մշակի» 3-րդ համարում կարդացինք մի այսպիսի լուր, Աստրախանից՝ «Օրւալ հետաքրքրութիւնը մեզանում կազմում է առաջնորդական խնդիրը: Զգալով անաչառ, եռանդոտ և անկաշառ առաջնորդի կարևորութիւնը, հետաքրքրում են նրանով, թէ ով կը նշանակել մեր վիճակի կառավարիչ», ըստ որում ժողովրդի համար շահաւէտ խնդիրների կարգում կալ և «կրթւած հոգեւորականների խնդիր», այն ինչ «տղէտ քահանաները սունկի պէս բուսել են նրանում վերջին տարիները»: Աստրախանի թեմի հալ ժողովուրդը քաղաքներումն է ընակում և մտաւորապէս զարգացած է. բաց այդ նոցն զարգացած ժողովուրդը այնքան տկարացել կորցրել է իր իրաւունքը և ձայնի նշանակութիւնը, որ չնայած՝ թէ քահանայի ընտրողն ինքն է, դարձեալ մի անաչառ և անկաշառ առաջնորդ պէտք է լինի, որ նրանց տալ կրթւած հոգեւորականներ: Երբ

¹⁾ Այդպիսի վկայութեամբ երկու երեք ամիս առաջ Խաթունարիս գիւղում պիտի ձեռնադրէր մի տիրացու, և հարկ եղաւ սուրհանդակ ուղարկել գիշերը, որ ձեռնադրութիւնը չկատարւի:

աստրախանցիին աչս տեղն է հասել, գիւղացու թախանձանքն է, որ հարկադրում է տգէտներ ձեռնադրել:

Վերջապէս՝ գիւղական ժողովրդի համախօսական թերթերը, եթէ մի րոպէ ենթադրենք թէ կանոնաւոր են կազմած, ինչ պարտաւորիչ նշանակութիւն ունեն հոգևոր իշխանութեան համար. նրանք ընտրողների կամքի արտապատուութիւններ են, իսկ աչգ կամքի օրինաւորութիւնը և պարբերութիւնը քննելը և հաւանութիւն կամ մերժումն տալը իշխանութեան իրաւունքն է. աչլապէս—չկալ իշխանութիւն:—Արչէն երէցը շարունակելով իր քարոզը՝ ասում է, թէ միանգամ պատահաբար գտնւելով վեհարանում աչն ժամանակ, երբ գիւղացիները բերել էին մի տիրացու, Վեհափառ Աթոռիկոսը տիրացուին Աւետարան կարդալ տալով և կամկալը տեսնելով դառնում է դէպի գիւղացիները և ասում, թէ՛ ձեր տիրացուն տգէտ է, թէ՛ քահանան, ժողովրդի հովիւը, նրա առաջնորդողը, նրա մտքի ճրագն և աղը լինելու բարձր կոչումն ունենալով՝ պէտք է ուստալ լինի: Բայց գիւղացիք պատասխանում են. թէ՛ «մեր տիրացուն գիւղի մէջ ծնած ու մեծցած լինելով՝ իրեն վարք ու բարք մեզի չալանի է. մի լաւութիւն ևս մեզ համար աչ է որ մեզի համար շատ շահակէտ է, երբ քահանան մեր գիւղացի լինի, նա հողաբաժին կուսնենալ գիւղին մէջ. աչ ևս չենք պարտաւորի որ բաժին տալ. թէ՛ մենք աղքատ չքատր գիւղացի ենք. շատ անգամ պատահում է, որ մենք քահանայի իրաւունք շուտ չենք վճարեր և քահանան համբերում է. թէ՛ ուսում առած մէկը, թէ՛ ևս նոյնպէս գիւղացի և գիւղից տրեխով գնացած՝ գիւղացիներին հրակէրին, որ գալ իրանց քահանալ լինի, կը պատասխանէ. ես եթէ քահանալ լինիմ, կերթամ քաղաքացւոց կը լինիմ, (հետաքրքիր է իմանալ, թէ բարեկ. Արչէն երէցը լսած է արդեօք, որ մի գիւղի ժողովուրդը ընտրել է ձեմարանից դուրս եկած երկու երիտասարդների և սրանք լծարութեամբ լանձն են առել նրանց համար քահանայանալ), որ ուսումն և կրթութիւն ունին և իմ պատիւ ձանաչում են. թէ՛ գիւղացի կոպիտ խելքի փիլիսոփայութեամբ՝ մեզ աչնպէս կը թւի, որ տգէտ ժողովրդին շատ ուստալ քահանալ չի կալիր և բնական կերպով չեն չարմարիր իրար»:

Այստեղ արդէն կանգ ենք առնում, որովհետեւ պատասխանելու պէտք չենք տեսնում. մենք միաչն ստորագծեցինք վերջին տողերը, որ ընթերցողի խորին ուշադրութիւնից չվրիպեն նրանք. «Արարատ»-ի էջերում փալլող աչ տողերը ապագալ պատմաբանի համար հատորներ կազմելու նիւթ տւող գանձ են:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՂՈՎԱԿԵԱՆՅՑ